Delbrück, Anton, D-r—Ueber Hamlets Vahnsinn. Sammlung gemeinverständlicher wissenschaflicher Vorträge, herausgegeben von Rud. Virchow und Willh. Wattenbach. Hamburg, 1893, Heft 172.

„Shakespeare und kein Ende"— Շեքսպիրը վերջ չունի—ասել է Գեօթէն։ Հանճարեղ ողբերգուն ստեղծել է տիպեր, որոնք նոյնքան կենդանի են ֆանտազիայի աշխարհում, որքան կենդանի անձերը իրականութեան մէջ։ Վաղուց է արդէն որ աշխարհքը եկել է այն եզրակացութեան, թէ Շեքսպիրին պէտք է ոչ թէ քննադատել, այլ դեռ միայն ուսումնասիրել։ Անհասկանալին Շեքսպիրի մէջ ոչ թէ սխալմունքով պէտք է մեկնել, այլ մեր անհասկացողութիւնով։ Մենք պէտք է աշխատենք բացատրել Շեքսպիրին, և նորա մութ տեղերը մենք ստիպուած ենք բացատրել նրանով, որ մենք դեռ բաւականաչափ չենք խորասուզուել Շեքսպիրի ուսումնասիրութեան մէջ. նորա մէջ գաղտնիքներ կան, որ դեռ պէտք է գտնել, ինչպէս բնութեան գիտութիւնը աշխատում է բնական երևոյթները հասկանալ բնութեան օրէնքները գտնելով և ոչ թէ այդ երևոյթները սխալ համարելով։ Ի հարկ է, չափազանցացրած՝ է համեմատութիւնը, բայց Շեքսպիրը չափազանց մեծ ստեղծագործող է։

Եւ շարունակ աճում մեծանում է Շեքսպիրեան գրականութիւնը. Գէօթէի ասած՝ Շեքսպիրը անվերջ է։ Այս անգամ ահա մեր ձեռքում մի նոր ուսումնասիրութիւն. „Ueber Hamlets Wahnsinn"—Համլետի խելագարութեան մասին,—որի հեղինակն է հոգեկան հիւանդութիւնների բժիշկ Ցիւրիխի համալսարանի պրիւատ դոցէնտ և Բուրգհոլցի բուժարանի բժիշկ դ-ր Անտոն Դելբրիւկ։

Դելբրիւկը աշխատում է լուսաբանել մի քանի ցայժմ լաւ չորոշուած գծերը Համլէտի բնաւորութեան մէջ։

Առաջին հարցը, որին մերձենում է Դելբրիւկը, այս է, թէ արդեօք Համլէտը իրօք ցնորուած է թէ միայն այդպէս է ուզում ցոյց տալ (այդպէս կեղծելը, ձևացնելը կոչւում է բժշկանութեան մէջ սիմուլացիա)։ Յայտնի է որ Համլէտը ինքը ասում է թէ նա իրր ձևացնում է, բայց յայտնի է նաև որ ողբերգութեան գրեթէ բոլոր անձերը նորան ցնորուածի տեղ են ընդունում։

Դելբրիւկը գտնում է, որ Համլէտը եթէ ցնորուած չէ, գոնէ գտնւում է իւր սաստիկ լուզուած կրքերի կատարեալ իշխանութեան ներքոյ։ Օրինակ, ներկայացման ժամանակ, երբ նրան յաջողւում է թագաւորի գաղտնիքը (Համլէտի հօր եղբօր) մերկացնել։ Համլէտը անկեղծ է, երբ Գիլդերստէրնի խօսքերին թէ՝ բարեհաճեցէք ինձ մի առողջ պատասխան տալ, նա պատասխանում է՝ «պարոն, ես այդ չեմ կարող!» Համլէտը այդ ժա-

մանակ գտնում է այն դրութեան մէջ, ինչ հոգեբուժական գիտութեան մէջ կոչւում է մանիակալին գրգռումնք (maniakalische Erregung)։ Մանաւանդ այդ ճիշդ է այն պատճառով, որ տեսարանի սկզբում, երբ Համլէտը մենակ է Հորացիոի հետ, սորա մօտ ձևանալը միտք չունի, քանի որ Հորացիոն գիտէ Համլէտի դաղտնիքը։

Աւելի վատ է Համլէտի դրութիւնը թագուհու ննջարանում, ուր նա Պոլոնիոսին սպանում է։

Դելբրիկը աւելի քիչ նշանակութիւն է տալիս ուրւականի (հօր ստուերի) երևալուն, չնայած որ նորագոյն գիտութիւնը բացատրում է ոգիներ տեսնելու երևոյթը իբր զգայարանքների խանգարմունք, իսկ այս վերջինը՝ իբր հիւանդութեան նշան։ Դելբիկը, սակայն, այդ բանը ընդունում է որպէս բանաստեղծական ֆիկցիա Շեքսպիրի կողմից, քանի որ երևոյթը տեսնում են (առաջին տեսարանում) ոչ միայն Համլէտը, այլ և Հորացիոն և Մարցելլուսը։ Ճիշդ է որ 3-րդ գործողութեան մէջ երևոյթը երևում է միայն Համլէտին, իսկ սորա մայրը այդ չի տեսնում և այդ պատճառով Համլէտը իւր մօրը երևում է իբր ցնորուած։

Մի երրորդ անգամ մեծ գրգռումնքի մէջ է Համլէտը, երբ սա նեռտում է իրան Օֆելիայի դերեզմանը և կռւում է Լաէրտի հետ։ Համլէտը ինքը լետոյ խօսում է այդ դէպքի մասին և ասում, որ իւր միտքը խանգարւած է (Trübsinn) և ինքը խելագար։

Շեքսպիրի դրամայի մէջ շատ ուրիշ տեղեր կան, ուր Համլէտը չի ձևացնում, այլ իրօք դէպի խելագարութիւնը տանող գրգռումնքի մէջ է, բայց նորան չրջապատողները խելագար են լատնում նորան նաև ամեն տեղ, ուր Համլէտը իւր պսիխիստական աշխարհայեցողութիւնն է ցոյց տալիս։ Չէ որ Համլէտի իրա խօսքերն են՝ «Օ՛, Աստուած իմ, Աստուած, որքան զզւելի և դատարկ է թւում ինձ այս աշխարհի ամբողջ կեանքը։ Թու, ֆու, սա մի անապատ այգի է, ուր որոմը նորան ամբողջապէս կլանում է։»

Դելբրիկը բնական է համարում, որ Համլէտի չրջապատողները նորան խելագար են լատնում, որովհետև նոքա չգիտեն Համլէտի լուզւածութեան պատճառները։ Հորացիոն և թագաւորը միայն գիտեն այդ. բայց դոցա խօսքերից Համլէտի մասին պարզ չի երևում թէ նոքա խելագար են համարում նորան թէ ոչ։ Հորացիոն ընդհանուր առմամբ Համլէտին հիւանդ չէ ընդունում, թէև մի անգամ հակառակն է ասում։ Թագաւորը աւելի է շեշտում նորա խելագարութեան մասին և գտնում է որ «խելագարութիւնը մեծերի մէջ չպէտք է առանց հսկողութեան մնայ»։ բայց դոքա ևս խնդիրը չեն վճռում։

Հաստատ է որ Համլէտը մի քանի դէպքերում դիտմամբ իրան խելագար է ձևացնում. օրինակի համար, առաջին գործողութեան մէջ ուրւականի երևալուց լետոյ. ապա նա հաստատապէս ձևացնում է իրան Պոլոնիուսի, իսկ տեղ-տեղ նաև ուրիշների առաջ։ Այժմ խնդիրը

այն է թէ արդիօք ձևացնող մարդը (սիմուլանտ) կարող է առողջ մարդ լինել։ Ցաւանի է որ մի քանի հոգեբոյժներ (պսիխիատր) այնքան հեռու են գնում, որ պնդում են թէ առողջ մարդը երբէք չի կարող իրան խելագար ձևացնել։ Բայց դ-ր Անտոն Դելբրիվը պնդում է, որ առողջ մարդը կարող է խելագար ձևանալ, բայց որ այդ անելու համար մարդ պէտք է շատ ծանրակշիռ շարժառիթներ ունենալ։ Ուրեմն այս դէպքում պէտք է որոնել այդ ծանր շարժառիթը։ Դա է՝ իւր հօր սպանման համար վրէժխնդիր լինելը իւր հօր եղբօրից (թագաւորից)։ Եւ իրօք, երբ բեմի վրայ թատրոն ներկայացնելով յանցաւորը (թագաւորը) գտնւում է, և երբ Համլէտը սպանում է Պոլոնիուսին, խելագար ձևանալու շարժառիթը նուազում է և նա յայտնում է մօրը թէ իբր խելագար է միայն խորամանկութիւնից։ Դորանից վերջ չարունակել խելագար ձևանալ՝ այլ ևս միտք չունի, և մինչև իսկ վտանգաւոր է Համլէտի համար, քանի որ Նորա խելագարութեան մասին խօսում է. ամբողջ պալատը և թագաւորը վճռում է հեռացընել Նորան։ Համլէտը ուրեմն լաւ կ'անէր եթէ այլ ևս չձևացնէր, եթէ միայն նա բաւականաչափ առողջ է և ուրեմն եթէ կարող է չձևացնել։ Բայց բանն էլ հէնց Նրանումն է, որ նա այդ չի կարող անել ինչպէս ինքը այդ ասում է. և նա այդ չի կարողանում, որովհետև նա իւր կրքերի կատարեալ իշխանութեան ներքոյ է, նա չի կարող իրան իշխել։

Ինչպէս?

Իւր հօր մահուան բօթը Նորան մեծ ցաւ պատճառեց. բայց Նորա սիրտը խոցւում է մի երկրորդ հարուածով՝ իւր մօր չուտափոյթ պսակելովը իւր հօր-եղբօր հետ։ Ներկայանում է հօր ուրուականը, որից իմանում է թէ նա ինչպէս է եղել սպանուած։ Համլէտի ուղեղը ընկնում է խառնաշփոթութեան մէջ։ Մտքերը շփոթւում են և նա զգում է, որ կորցրել է իրա վերայ իշխելու ոյժը։ Նա զգում է, որ չի կարողանալու դաղտնիքը պահել. և որովհետև տեսնում է, որ այդ դրութեան մէջ ուրիշներին կիսախելագար է երևալու, այդ պատճառով նա թոյլ է տալիս իրան որ բոլորովին խելագար երևայ, այն յոյսով թէ ապագայում այդ պէտքական կը լինի, ինչպէս ինքն է ասում։ Այդպիսով նա այլ ևս չի ձգտում իրա վրայ իշխել և թոյլ է տալիս անձնատուր լինել կրքերի հոսանքին։ Եւ ահա հէնց այդ բանումն է կայանում իւր ձևանալը, սիմուլացիան։ Դորանով նա իրօք կարողանում է երբեմն ծածկել գաղտնիքը։ Շատ բնորոշ է այդ կողմից 4-րդ գործողութեան 3-րդ տեսիլը, ուր Ռոզենկրանց և Գիլդենստէրն Համլէտին հարց ու փորձի են ենթարկում Պոլոնիուսի սպանման մասին. «Դուք պէտք է ասէք՝ ուր է դիակը», ասում են Համլէտին. իսկ սա, իբր թէ չի հասկանում, որ խօսքը Պոլոնիուսի մասին է. «Դիակը թագաւորի մօտ է, բայց թագաւորը դիակի մօտ չէ», ասում է նա մտածելով իւր հօր մասին։ «Թագաւորը մի բան է,» աւելացնում է

Համլէտը։

—«Մի բան, ողորմած տէր?»

—«Մի բան, որ ոչինչ է»։

Համլէտը շատ լաւ է զգում, որ այդ խօսքերից Ռոզենկրանցը և Գիլդենստէրնը «չինչ չհասկացան։ Ահա այդ չափով նա ձևացնում է։ Բայց այդ նրան լարմար է թւում՝ իւր ուղեղով անցկացող մտքերին արտայայտութիւն տալու համար։ Նա շատ անգամ այնպէս է խօսում, որ նորան չհասկանան և խօսում է այնպիսի բաների մասին, որ ուրիշները չեն կարող հասկանալ։

Տեղ-տեղ նա չափազանցնում է. օրինակ, երբ նա անկարգ հագուստով ներկայանում է Օֆելիային։ Կասկած չկայ, որ նա այդ դիտմամբ է անում։ Կամ երբ նա ուզում է ծեր և լիմար Պոլոնիուսին որոգայթի մէջ գցել կամ Օստիկին ծիծաղելի դարձնել։ Ամենին չի ձևացնում միայն սկզբում լիշած կրքոտ տեսարաններում։

Բայց դ-ր Դելբրիվը գտնում է որ Համլէտը դիմում է նաև դիսսիմուլացիային։ Հոգեբուժութեան մէջ այդպէս է կոչւում այն դէպքը, երբ մի ոմն իւր հիւանդութիւնը ծածկում է. նա ձևացնում է թէ առողջ է։ Այսպէս, օրինակ, շատ լաւ է ձևացնում իրան երբ բնի վրայ ներկայացումն են տալիս։ Չնայած որ Համլէտը վերջին ծայր լարուած է և գրգռուած, բայց նա ամենաճարպիկ պալատականի ձևով խօսում է Օֆելիայի, թագաւորի ու թագուհու հետ, մինչև որ, թագաւորի գաղտնիքը մերկացնելուց լետոյ, նորա կրքերը ամենաբուռն կերպով պայթում են։

Մեզ հետ միասին շատերը կը հարցնեն անշուշտ, թէ կարող է արդեօք հիւանդ մարդը իրան ձևացնել։ Հոգեբոյժ դ-ր Դելբրիվը պատասխանում է այդ հարցին, թէ «դա ամենևին անկարելի չէ և մինչև անգամ հազւագիւտ էլ չէ»։ Իրողութիւն է, որ շատ հիւանդներ հակումն ունին հիւանդական մի մի նշանները չափազանցնել, կամ իսկականների վրայ ուիրիշներն էլ աւելացնել՝ ձևացնելով։ Եւ շատ անգամ լետոյ, ոչ միայն դիմացի մարդիկ, այլ նոյն իսկ իրանք հիւանդները չեն կարողանում ջոկել, եթէ երբ նոքա ձևացրեցին և երբ ոչ, այն աստիճանի այդ բաները խառն կերպով են կատարում։

Այս ամենով հանդերձ, Դելբրիվը, սակայն, պնդում է, որ ձևանալը (սիմուլացիա) միայն ստորադաս և կողմնակի դեր է խաղում Համլէտի մէջ, և որ գլխաւոր խնդիրը դորանով չի լուծւում։ Իսկ խնդիրը սա է թէ Համլէտը խելագար է թէ ոչ։

Բժշկական գիտութեան ներկայ դաղափարների համեմատ, ասում է Դելբրիվ, խելագարութիւն, ցնորամտութիւն խօսքերը չեն սազում Համլէտի դրութեանը։ «Համլէտը չունի որ և է բացայայտ հոգեկան հիւանդութիւն. բայց նա գտնում է այն անցողական դրութիւնների մէջ, որոնք շատ լաճախ գոյանում են ոգեկան առողջութեան և հիւանդութեան միջանցքում։ Ոգեկան հիւանդութիւնը զարգանում է ոգեկան առողջ կեանքի միջով։ Հիւանդութիւնը զարգանում է հատ հատ մարդկանց մէջ այնպէս, ինչպէս առողջ մարդու հասունութիւնն է զարգա-

նում։ Ոգեկան զարգացումը կարող է մերթ բոլորովին ուղիղ, մերթ շատ ծուռ ճանապարհով ընթանալ, երբեմն էլ մի քանի կողմերով ուղիղ, մի քանի ուրիշ կողմերով՝ ծուռ ընթանալ։ «Այդ դէպքում մարդուս գործողութիւնները լինում են խառն անսովոր գործողութիւնների հետ»։ Բայց երբ այդ դէպքում պէտք է ոգեկան հիւանդ ընդունել մարդուն? «Այդ կախուած է անսովորի (աբնորմ) քանակութիւնից»։ Բայց այդ քանակութիւնը իմանալու համար չկայ մի մշտական չափ, հետևապէս մի որոշ դրութեան մէջ եղած մարդու մասին կարելի է տարբեր կարծիքներ ունենալ։ Այդ պատճառով և Դելբրիւկը, «երբ զգուշ դիպլոմատ» Համլէտի խելագարութեան մասին կտրական պատասխան չի տալիս, բայց պնդում է որ «սահմանի վրայ լամենալն դէպս նա (Համլէտը) կանգնած է։»

Անսովորը, աբնորմը՝ Համլէտի արտակարգ գրգռականութիւնն է։ Օրինակ, երբ Լաէրտը իւր քրոջ մահուան մասին մի փոքր չափից դուրս գանգատւում է, մթթէ դա հիմք է որ Օֆելիային սիրող Համլէտը այնքան կատաղի, ինչպէս նա անում է!

Այդ և դորա նման արտակարգ գրգռականութիւնը բնորոշ է Համլէտի հիպերէսթեզիայի համար։

Համլէտի բնաւորութեան մի ուրիշ արտակարգ գիծը, նորա հոռետեսական (պեսիմիստական) տրամադրութիւնն է։ Այլ բան է պեսիմիստական աշխարհայեցողութիւն, այլ բան է պեսիմիստական տրամադրութիւն։ Վերջինս չի մնում սովորականի սահմանների մէջ։

Դելբրիւկը ապա անցնում է խօսելու Համլէտի անվճռականութեան, վճիռ կայացնելու անընդունակութեան մասին, որ, ինչպէս յայտնի է, շատերը արդէն նկատել են։ «Այդ անընդունակութիւնը», ճիշդ բոպէին ճիշդ վճիռ կայացնել, չնայած բարձր զարգացած խելքին և ամենաազնիւ դիտաւորութիւններին, կամ ըստ Ֆիշերի՝ գործելու այդ esprit d'escalier, ահա ինչն է այնքան բնորոշ այս դժբաղդ բնաւորութիւնների համար, որոնք պաթոլոգիական սահմանի վրայ են կամ մի ոտով արդէն նորա մէջն են։»

Վերջացնում ենք լօդւածը աւելացնելով, որ դ-ր Դելբրիւկի փոքրիկ աշխատութիւնը ունի քսան և երեք ծանօթութիւններ նիւթին վերաբերեալ գրականութեան մասին։

Ա. Ա.